## ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

*Թ. 78. Փետրուարի 10-ին Սինօդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անցեալ 1911 թ. նոյեմբերի 11-ի № 4830 յայտարարութիւնը, որով խնդրել էր Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու միաբան Աբրահամ աւ. քահ. Ղազազեանցին, հիւանդութեան պատճառով, թոյլ տալ ընդմիշտ Տփխիսում բնակուելու, որոշեց. թոյլ տալ Ախալցխայի Աբրահամ քահանայ Ղազազեանցին անձնական տկարութեան պատճառով տեղափոխուել Տփխիս բնակուելու ազատ համարելով նորան իւր ծխի հովւութիւնից։ Այս վճռի մասին հրաման տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային, պատուիրելով հետևել, որ Աբրահամ քահանան Տփխիսում քահանայագործութիւն չանէ։*

*Թ. 88. Փետրուարի 12-ին Սինօդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսի անցեալ 1911 թ. Յուլիսի 23-ի № 1065 յայտարարութիւնը Լիս գիւղի եկեղեցու սարկաւագ Նիկողայոս Բուչեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. առաջադրել Վրաստանի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսին ձեռնադրել Նիկողայոս սարկաւագ Բուչեանին քահանայ Լիս և յարակից գիւղերի համար։*

*Թ. 89. Փետրուարի 13-ին Սինօդը լսեց Կովկասի փոխարքայի դիւանատան անցեալ 1911 թ. Յունիսի 26-ի № 13878 գրութիւնը Փոթի քաղաքում կառուցանելիք Հայոց եկեղեցու մասին, որոշեց. յայտնել Կովկասի փոխարքայի դիւանատանը, թէ, որպէս երևում է Փոթի քաղաքի եկեղեցական ծխական Հոգաբարձութեան տուած բացատրութիւններից, նա ձեռնարկել է Փոթիում եկեղեցու շինութիւնն նկատի ունենալով 1905 թ. Ապրիլի 17-ի Բարձրագոյն Հրամանը, որի պահանջները կատարուած է եղել,*

ստացած լինելով Թեմական Հոգևոր իշխանութեան հաւանութիւնը, դրամական նուէր ժողովելու թոյլտուութիւն Կովկասի գլխաւոր իշխանութիւնից և հաստատած ունենալով շինութեան յատակագիծը, նամանաւանդ, որ եկեղեցին շինուելու էր իւր հին տեղում, համաձայն Շինար. կանոնադր. 143 յօդուածի։

Թ. 91. Փետրուարի 13-ին Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անցեալ 1911 թ. Յուլիսի 1-ին № 3104 յայտարարութիւնը Արդուինի գաւառի Օքրոպակերտ գիւղացի Պետրոս Տէր Յարութիւնեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. Թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Պետրոս Տէր Յարութիւնեանին և յանձնարարել Թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրել նորան քահանայ նոյն գաւառի Նորաշէն գիւղի համար։

Թ. 98. Փետրուարի 17-ին Սինոդը լսեց Կովկասի փոխարքայի դիւանատան անցեալ Յունուարի 26-ի № 2416 գրութիւնը զինուորակոչ ատեաններին ծննդական քաղուածներ տալու մասին, որոշեց. ուղարկելով Տ. փոխարքայի դիւանատան տարւոյս Յունուարի 26-ի № 2416 գրութեան պատճէնները պատուիրել շրջաբերական հրամանով բոլոր կոնսիստորիաներին խիստ հսկողութիւն ունենալ չափաբերական քաղուածներում նկատուած թերութիւնները վերացնելու համար։ Այս վճռի մասին տեղեկութիւն տալ Տ. փոխարքայի դիւանատանը։

Թ. 113. Փետրուարի 20-ին Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցեալ 1911 թ. Դեկտեմբերի 8-ի № 8683 յայտարարութիւնը Տաճկաստանի Խնուս գաւառի Բերդաւանի բնակչուհի Զարօ Ալիբէկեանին Հայաստանեայց եկեղեցու ծոցը ընդունելու մասին, որոշեց. Թոյլ տալ Կարսի Հոգևոր Կառավարութեան ընդունել Տաճկահպատակ քրդուհի Զարօ Ալիբէկեանին Հայաստանեայց եկեղեցու ծոցը, մկրտելով նորան իւր խնդրի համաձայն։

*Թ. 116. Փետրուարի 22-ին Սինօդը լսեց Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի անցեալ 1811 թ. Մայիսի 18-ի № 1209 յայտարարութիւնը Լուգանսկ քաղաքում մի հողամաս գնելու և եկեղեցի շինելու մասին, որոշեց. խնդրել Դեպարտամենտին հայցել Բարձրագոյն հաճութիւն Լուգանսկում աղօթատուն շինելու և աղօթատան անունով գնելու վաճառուող հողամասը 14,000 ռուբլով։*

*Թ. 122. Փետրուարի 24-ին Սինօդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցեալ 1911 թ. Դեկտեմբերի 23-ի № 6300 յայտարարութիւնը Չրռ-չրռ գիւղացի Աղաբէկ Բաղդասարեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Աղաբէկ Բաղդասարեանին և յանձնարարել փոխթեմակալին ձեռնադրել նորան քահանայ Չրռ-չրռ գիւղի ծխականների համար։*